# ԳՏՆՎՈ՞ՒՄ ԵՔ ԱՐԴՅՈՔ ՆԵՐԳԱՂԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Իմացե՛ք ավելին տուբերկուլյոզի (TB) հայտնաբերման պարտադիր թեստի մասին

## ՁԵԶԱՆԻՑ ԱՐՅՈՒՆ ԿՎԵՐՑՆԵՆ

- Տուբերկուլյոզի (կամ TB) թեստը պարտադիր է
- Տուբերկուլյոզը (TB) փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Մարդկանց մեծամասնությունը չգիտի, որ վարակված է
- Մարդիկ, ովքեր ստացել են տուբերկուլյոզի (TB) դեմ պատվաստանյութ (BCG), դարձյալ կարող են վարակվել տուբերկուլյոզով
- Տուբերկուլյոզի դեմ իրականացված նախորդ պատվաստումը (BCG) չի ազդում արյան ստուգման արդյունքների վրա:



## ԵԹԵ ՁԵՐ ԱՐՅԱՆ ԹԵՍՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴՐԱԿԱՆ Է



- Ձեր մարմնում առկա են տուբերկուլյոզի (TB) մանրէներ
- Գոյություն ունի երկու տեսակի տուբերկուլյոզ (TB).
  - Գաղտնի տուբերկուլյոզային վարակ (LTBI), որը հայտնի է նաև որպես «թաքնված/քնած տուբերկուլյոզ»
  - Ակտիվ տուբերկուլյոզ (TB)
- Ձեզ անհրաժեշտ է կատարել կրծքավանդակի ռենտգեն՝ որոշելու համար տուբերկուլյոզի տեսակը, որով վարակվել եք
- Տեղեկացրեք Ձեր բժշկին, եթե ունեք հազ, արյուն հազալիս, ջերմություն, ախորժակի կորուստ, քաշի անհասկանալի կորուստ կամ գիշերային քրտնարտադրություն

## ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԸ ԲՈՒԺԵԼԻ Է

- Կան հակաբիոտիկներ, որոնք կարող են ոչնչացնել տուբերկուլյոզի բակտերիաները և կանխել վարակվելիությունը
- Այսօր հակաբիոտիկների ընդունումը կարող է պաշտպանել Ձեզ և Ձեր ընտանիքին ապագայում տուբերկուլյոզով հիվանդանալուց



ԽՄԲԱԳՐՎԱԾ՝ 11/06/2023